ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան	26.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/32

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Մասնակից՝ «Իվենթ սիթի» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Իվենթ սիթի» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Էդ. Մկրտչյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/10» ծածկագրով գնանշման հարցում, գեներատորների վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/10»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 01.02.2021թ.-ի թիվ 26/26/1198-2021 գրությամբ «Իվենթ սիթի» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 27.01.2021թ.-ի թիվ 1/18-2/3912-2021 գրության հիման վրա, 01.02.2021թ.-ին «Իվենթ սիթի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 01.02.2021թ.-ին:

02.02.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/32 համարի ծածկագիրը:

11.02.2021թ.-ին և 26.02.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 11.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.02.2021թ.-ին:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 27.01.2021թ. թիվ 1/18-2/3912-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է հետևյալը.

«ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Իվենթ սիթի» ՍՊԸ-ի (այսուհետ Կատարող) միջև կնքվել է ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/10 ծածկագրով գեներատորների վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի շրջանակներում Կատարողը պետք է մատուցեր Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ծառայությունները՝ ըստ Պատվիրատուի պահանջի, բայց ոչ ուշ քան մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը:

Սակայն, Կատարողը չի մատուցել ըստ Պատվիրատուի պահանջի ներկայացված՝ տեխնիկական բնութագրին համապատասխան ծառայությունները, իսկ մատուցած ծառայությունները եղել են ոչ ամբողջական, ոչ նպատակային, ինչի հետևանքով չի ապահովվել սարքավորումների անխափան աշխատանքը, որն էլ պատճառ է հանդիսացել սարքավորումների պարբերաբար խափանումների: Մասնավորապես՝ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության շենքում խափանվել է «Genelec GFW 160-T5-IVECO» մակնիշի գեներատորը, Արևելյան մաքսատուն-վաչության ք. Վանաձորի վարչական շենքի «Stamford-Parkins» մակնիշի գեներատորի վերանորոգման աշխատանքները կատարվել են մասնակի՝ չի փոխարինվել գեներատորի համապատասխան ջերմային ցուցիչը, ինչի հետևանքով գեներատորը աշխատում է խափանումներով, Արևելյան մաքսատուն-վարչության Գոգավանի մաքսային կետ-բաժնում «SPT/Genelec/IVECO GFW 160TE» մակնիշի գեներատորի զննության արդյունքում պարզվել է, որ խափանված է գեներատորի նախատաքացուցիչը, սակայն չի փոխարինվել, ինչի արդյունքում, ելնելով եղանակային պայմաններից, գերենատորը փաստացի չի աշխատում: Միաժամանակ հայտնում եմ, որ իրականացվել է գեներատորների յուղի ամբողջական փոխարինում, սակայն որոշ վայրերում չեն փոխարինվել յուղի զտիչները:

Հաշվի առնելով, որ պայմանագրի պահանջները կատարվել են թերի կամ հիմնականում չեն կատարվել, ինչպես նաև Կատարողի կողմից հանձնման-ընդունման ակտ 1-ով ներկայացված՝ մատուցված ծառայությունների քանակի և փաստացի կատարված աշխատանքների անհամապատասխանությունը՝ հայտը նախագծած ներկայացուցիչը 2020 թվականի դեկտեմբերի 30-ին Կատարողի կողմից էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով ներկայացված հանձնման-ընդունման արձանագրությանը տվել է բացասական եզրակացություն:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1 կետի 2.1.3 են-թակետի ա) կետը, Պատվիրատուն 2021թ. հունվարի 22-ից Պայմանագիրը միակող-մանիորեն լուծել է:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/10» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Իվենթ սիթի» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Իվենթ սիթի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 02.02.2021թ.-ի գրությամբ դիմել է «Իվենթ սիթի» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.02.2021թ.-ի թիվ 26/26/1198-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում:

Ներկայանալով 26.02.2021թ.-ին հրավիրված նիստին, Մասնակցի ներկայացուցիչը ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/10» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Իվենթ սիթի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերին:

4. <u>ՍՑ-LO-2021/32 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Իվենթ սիթի» ՍՊԸ-ի միջև 16.11.2020թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/10» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայությունների մատուցումն պետք է իրականացվի պայմանագրին ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև՝ 2020թ.-ի դեկտեմբերի 25-ը:

iii. Գնման հայտը նախագծած աշխատակցի կողմից 30.12.2020թ.-ին կազմվել է «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/10» ծածկագրով պետական գնման պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ թիվ 1 եզրակացությունը (այսուհետ նաև՝ Եզրակացություն), որի համաձայն վերջինս վերոհիշյալ պայմանագրով «Ինվենթ սիթի» ՍՊԸ-ի կողմից մատուցված ծառայությունների մասով տվել է բացասական եզրակացություն:

iv. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 25.01.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Իվենթ սիթի» ՍՊԸ-ի միջև 16.11.2020թ.-ին կնքվել է «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/10» ծածկագրով գեներատորների վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պայմանագիր, որի շրջանակներում Կատարողը պետք է մատուցեր Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ծառայությունները՝ ըստ Պատվիրատուի պահանջի, բայց ոչ ուշ քան մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը: Սակայն, Կատարողը չի մատուցել ըստ Պատվիրատուի պահանջի ներկայացված՝ տեխնիկական բնութագրին համապատասխան ծառայությունները, իսկ մատուցած ծառայությունները եղել են ոչ ամբողջական, ոչ նպատակային, ինչի հետևանքով չի ապահովվել սարքավորումների անխափան աշխատանքը, որն էլ պատճառ է հանդիսացել սարքավորումների պարբերաբար խափանումների: Հաշվի առնելով, որ պայմանագրի պահանջները կատարվել են թերի կամ հիմնականում չեն կատարվել, ինչպես նաև Կատարողի կողմից հանձնման-ընդունման ակտ 1-ով ներկայացված՝ մատուցված ծառայությունների քանակի և փաստացի կատարված աշխատանքների անհամապատասխանությունը՝ հայտը նախագծած ներկայացուցիչը 30.12.2020թ.-ին Կատարողի կողմից էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով ներկայացված հանձնման-ընդունման արձանագրությանը տվել է բացասական եզրակացություն:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1 կետի 2.1.3 ենթակետի «ա» պարբերությունը՝ 25.01.2021թ.-ին, Պատվիրատուն միակողմանի լուծել է թիվ «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/10» Պայմանագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.02.2021թ.-ի թիվ 26/26/1198-2021 գրությամբ «Իվենթ սիթի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով

պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ կատարողը ստանձնում է գեներատորների վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի

մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Իվենթ սիթի» ՍՊԸ-ի միջև 16.11.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/10» ծածկագրերով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայությունների մատուցումն պետք է իրականացվի պայմանագրին ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև՝ 2020թ.-ի դեկտեմբերի 25-ը: Գնման հայտը նախագծած աշխատակցի կողմից 30.12.2020թ.-ին կազմվել է «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/10» ծածկագրով պետական գնման պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ թիվ 1 եզրակացությունը, որի համաձայն վերջինս վերոհիշյալ պայմանագրով «Ինվենթ սիթի» ՍՊԸ-ի կողմից մատուցված ծառայությունների մասով տվել է բացասական եզրակացություն:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 25.01.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Իվենթ սիթի» ՍՊԸ-ի միջև 16.11.2020թ.-ին կնքվել է «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/10» ծածկագրով գեներատորների վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պայմանագիր, որի շրջանակներում Կատարողը պետք է մատուցեր Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ծառայությունները՝ ըստ Պատվիրատուի պահանջի, բայց ոչ ուշ քան մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը: Սակայն, Կատարողը չի մատուցել ըստ Պատվիրատուի պահանջի ներկայացված՝ տեխնիկական բնութագրին համապատասխան ծառայությունները, իսկ մատուցած ծառայությունները եղել են ոչ

ամբողջական, ոչ նպատակային, ինչի հետևանքով չի ապահովվել սարքավորումների անխափան աշխատանքը, որն էլ պատճառ է հանդիսացել սարքավորումների պարբերաբար խափանումների: Հաշվի առնելով, որ պայմանագրի պահանջները կատարվել են թերի կամ հիմնականում չեն կատարվել, ինչպես նաև Կատարողի կողմից հանձնման-ընդունման ակտ 1-ով ներկայացված՝ մատուցված ծառայությունների քանակի և փաստացի կատարված աշխատանքների անհամապատասխանությունը՝ հայտը նախագծած ներկայացուցիչը 30.12.2020թ.-ին Կատարողի կողմից էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով ներկայացված հանձնման-ընդունման արձանագրությանը տվել է բացասական եզրակացություն:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1 կետի 2.1.3 ենթակետի «ա» պարբերությունը՝ 25.01.2021թ.-ին, Պատվիրատուն միակողմանի լուծել է թիվ «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/10» Պայմանագիրը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Իվենթ սիթի» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի մասնակի 22.01.2021թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նույն օրը հրապարակելով պայմանագրի միակողմանի մասնակի լուծման մասին ծանուցումը:

Ինչ վերաբերում է Մասնակցի կողմից գործի քննության ընթացքում ներկայացված գրագրություններին, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ դրանցով՝ հատկապես Մասնակցի կողմից Պատվիրատուի գնման հայտը նախագծած ներկայացուցչին ուղղված գրությամբ, չի հաստատվում այն հանգամանքը, որ Մասնակիցը ստանալով Եզրակացությունը, ձեռնարկել է իրենից կախված բոլոր հնարավոր գործողությունները՝ անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինելու համար: Ընդ որում, այդ գրությամբ հաստատվում է, որ Մասնակիցը մատնվել է անգործության, այն դեպքում, երբ կարող էր մինչև պայմանագրի լուծման մասին ծանուցում ստանալը, ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ուղղված մատուցված ոչ պատշաճ ծառայության շտկմանը, ինչը չի արել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը

ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Իվենթ սիթի» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.02.2021թ.-ի թիվ 26/26/1198-2021 գրությամբ «Իվենթ սիթի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/32 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Իվենթ սիթի» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**